26.831

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1934 ԹՎԻ ԲԵՐՔԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ
ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

336
Կ-63

ՀՐԱՏ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՐԵՎԱՆ 1934

2 2 MAY 2013

26831

Պետհրատի տպարան, Ցերեվան

Սրբագրիչ՝ Ա. Հախվերդյան

Գլավլիտ № 154: Պատվեր № 552: Տիրաժ 1000

05 JAN 2010

336
Կ-63

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1934 ԹՎԻ ԲԵՐՔԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1006
69457

3081

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի 1934 թ. փետրվարի 10-ի «Կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից 1934 թ. բերքից պարտադիր կարգով պետությանը հացահատիկ, արևածաղիկ, բրինձ և կարտոֆիլ հանձնելու մասին» վորոշման հիման վրա («Իզվեստիա» 1934 թ. փետրվարի 11, № 37) Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—

1. Հաստատել 1934 թ. բերքից հացահատիկ հանձնելու

№ № տարածքի դեմարկացիոն գծերի	ՄՏԿ կողմից սպասարկվող կոլտնտեսություններ		ՄՏԿ կողմից չսպասարկվող կոլտնտեսություններ	
	Բոլոր հացահատիկների համար միջին նորմայով	Վերից ցորեն	Բոլոր հացահատիկների համար միջին նորմայով	Վերից ցորեն
1. Արարատ	40	45	80	85
2. Աղբաբա	30	35	40	45
3. Ալլահվերդի	—	—	30	35
4. Արթիկ	40	40	80	80
5. Ախուրյան	40	45	70	75
6. Ալեքսանդրապոլ	40	40	70	70
7. Բասարգեչար	40	45	60	65

№№ ըստ կարգի	Շրջաններ	ՄՏԿ կողմից սպասարկվող կոլտնտեսություններ		ՄՏԿ կողմից չսպասարկվող կոլտնտեսություններ	
		Բոլոր հացահատիկային կուլտ-ների համար միջին նորման	Կոշտ ցորեն	Բոլոր հացահատիկային կուլտ-ների համար միջին նորման	Կոշտ ցորեն
8.	Գորիս	—	45	65	65
9.	Դիլիջան	—	35	40	40
10.	Իջևան	—	—	40	40
11.	Ղարաքիլիսա	—	—	40	40
12.	Ղափան	—	—	50	50
13.	Քեշիշքենդ	—	—	40	40
14.	Կոտայք	—	—	75	80
15.	Լենինական	50	50	70	70
16.	Մարտունի	30	30	50	50
17.	Ն. Բայազետ	—	—	50	50
18.	Փաշալու	—	—	60	65
19.	Սիսիան	—	—	50	55
20.	Թալին	—	—	50	50
21.	Շամշադին	—	—	40	45
22.	Վաղպատ	30	30	60	60
23.	Վեդի	30	30	50	50
24.	Ղամարլու	30	30	60	60
25.	Ղուրդուղուլի	30	30	60	60

հետևյալ շրջանային նորմաները ցանքի պլանի յուրաքանչյուր հեկտարի հաշվով (կիլոգրամներով).—

2. Այս վորոշման 1-ին հոդ. մատնանշված շրջանային նորմաները պարտադիր են համարվում տվյալ շրջանի բոլոր կոլտնտեսությունների համար և չեն կարող փոփոխությունների յենթարկվել:

3. Յուրաքանչյուր կոլտնտեսության կողմից պետությանը հանձնվելիք հացահատիկի քանակությունը վորոշվում է շրջանային գործադիր կոմիտեն այս վորոշման 1-ին հոդ. ճիշտ իմաստի համաձայն:

4. Հացահատիկ հանձնելու չափը յուրաքանչյուր անհատական տնտեսության համար, ցանքարարների՝ գյուղխորհրդի կողմից նախապես կազմված ցուցակների համաձայն հաշվում է գյուղատնտեսական մթերքների մթերման կոմի-

տեյի շրջանային լիազորը (գյուղատնտեսական մթերքների մթերման շրջանային գործադիր կոմիտեյի նախագահի տեղակալը), յելնելով յուրաքանչյուր տնտեսության տրված 1933 թ. աշնանացանի և 1934 թ. գարնանացանի պլանային առաջադրանքներից այն հաշվով, վորպեսզի անհատական տնտեսության կողմից մեկ հեկտարից հանձնվող հացահատիկի չափը 5—10 տոկոսով ավելի լինի տվյալ շրջանի կոլտնտեսությունների համար սահմանված նորմայից:

№№ ըստ կարգի	Շրջաններ	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր
1.	Աբարան	—	10	65	25
2.	Աղբաբա	—	20	70	10
3.	Ալլահվերդի	50	50	—	—
4.	Արթիկ	—	50	40	10
5.	Ախտա	—	40	50	10
6.	Աշտարակ	10	80	10	—
7.	Բասարգեչար	—	35	45	20
8.	Գորիս	—	50	50	—
9.	Դիլիջան	—	80	20	—
10.	Իջևան	50	50	—	—
11.	Ղարաքիլիսա	—	65	35	—
12.	Ղափան	30	50	20	—
13.	Քեշիշքենդ	10	70	20	—
14.	Կոտայք	10	70	20	—
15.	Լենինական	—	50	40	10
16.	Մարտունի	—	40	40	20
17.	Ն. Բայազետ	—	40	40	20
18.	Փաշալու	5	45	50	—
19.	Սիսիան	—	40	50	10
20.	Թալին	—	50	50	—
21.	Շամշադին	15	75	10	—
22.	Վաղպատ	70	30	—	—
23.	Վեդի	40	60	—	—
24.	Ղամարլու	70	30	—	—
25.	Ղուրդուղուլի	70	30	—	—

5. Կոլտնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելը պետք է կատարվի հետևյալ օրացուցային ժամկետներում, տոկոսային հարաբերությամբ ըստ շրջանների.—

6. Անհատական տնտեսությունների համար նրանց տրված պլանը կատարելու վերջին ժամկետ սահմանել հոկտեմբերի 1-ը, այն պայմանով, որ հանձնման ժամկետները նրանց համար սահմանվեն կոլտնտեսություններին տրված ժամկետների համեմատ:

7. Պարտավորեցնել շրջանային գործադիր կոմիտեներին 1934 թ. ապրիլի 1-ից վոչ ուշ յուրաքանչյուր կոլտնտեսության հացահատիկ հանձնելու պարտավորությունն ըստ մշակույթների, մատնանշելով նրա կատարման ժամկետները:

Նույն այդ ժամկետներում, շրջանային գործադիր կոմիտեների պատասխանատվությամբ, գյուղխորհուրդները պետք է անհատական տնտեսություններին հասցնեն պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունները, մատնանշելով հանձնվելիք հացահատիկի չափն ըստ յուրաքանչյուր առանձին մշակույթի ինչպես նաև առաջադրանքը կատարելու ժամկետները:

8. Պետությանը հացահատիկ հանձնելիս կոլտնտեսությունները և անհատական տնտեսությունները կարող են մեկ մշակույթը փոխարինել մի ուրիշ վորևե մշակույթով, սակայն թույլ չի տրվում ցորենը ուրիշ վորևե մշակույթով փոխարինել, ինչպես նաև պարենային այլ մշակույթները հացահատիկով և կրուպաներով փոխարինել:

9. Կոլտնտեսություններն ու անհատական տնտեսությունները պարտավոր են տեղափոխելու և հանձնելու նրանցից հասանելիք հացահատիկը Զագոտզեռնոյի (կամ նրան մթերման գծով փոխարինող կազմակերպությունների) կայարանամերձ պահեստները, իսկ մթերման մարմինները պարտավոր են պահպանել հացահատիկ հանձնողների հետ հաշիվ տեսնելու գոյություն ունեցող պրակտիկան, նկատի առնելով փոխադրավարձի հեռավորությունը:

10. Այս վորոշմամբ սահմանված պարտավորությունների դիմաց կոլտնտեսություններից ու անհատական տնտեսություններից ընդունվում է միմիայն լավորակ հացահատիկ:

Մգլած ու ծլած հացահատիկ չի ընդունվում հանձնվելիք հացահատիկի դիմաց: Ուրիշ կուլտուրաների խառնուրդով և խոնավ հացահատիկ ընդունելիս համապատասխան զեղչ է արվում կեղտոտության ու խոնավության համար, Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի սահմանած նորմաների համաձայն:

Հանձնման կայանների վարիչները պարտավոր են զատական պատասխանատվության յենթարկելու այն անձանց, վորոնք ակնհայտ վատորակ կամ փչացած հացահատիկ հանձնելու փորձ կանեն:

11. Պետական կայուն գներով գյուղական ուսուցիչներին, գյուղատնտեսներին, բժշկական և անասնաբուժական աշխատողներին հաց մատակարարելու համար պարտադիր հավելում է սահմանվում կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կարգով հանձնվելիք հացահատիկի այս վորոշմամբ սահմանված քանակության 2 տոկոսի չափով:

Այդ հավելման հաշվին հանձնվող հացահատիկն ընդունվում է նույն այն պայմանով, վորոնք սահմանված են պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելու համար (հանձնման ժամկետների, գների, հանձնման կայանների վերաբերմամբ և այլն):

12. Պետությանը հացահատիկ հանձնելու համար այս վորոշմամբ սահմանված պարտավորությունների կատարումը յուրաքանչյուր կոլտնտեսության և անհատական տնտեսության առաջնահերթ խնդիրն է և պետք է կատարվի առաջին կալից:

Հացի կոլտնտեսական առևտուրը թույլատրվելու յե հացամթերման այս վորոշմամբ սահմանված պլանն ամբողջ հանրապետության մեջ կատարվելուց. և ապա սերմֆոնդերը լրիվ հավաքելուց հետո:

13. Այն կոլտնտեսություններին, վորոնք հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները չեն կատարի այս վորոշմամբ սահմանված որացուցային ժամկետներում, գյուղատնտեսական մթերքների մթերման շրջանային լիազորը գյուղխորհուրդների միջոցով դրամական տուգանքի յե յենթարկում պարտավորության չկատարված մասի շուկայական արժեքի չափով և, բացի դրանից, այդ կոլտնտեսություններից ժամկետից առաջ անվիճելի կարգով գանձվում է նրանց ամբողջ տարվա պարտավորությունը:

Պետությանը հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարած անհատական տնտեսություններից, յեթե այդ չկատարելը չարամիտ կամ խմբական բնույթ չի կրել, վերը մատնանշված կարգով տուգանք ե գանձվում պարտավորության չկատարած մասի չուկայական արժեքի մինչև հնգապատիկ չափով և, բացի դրանից, այդ տնտեսություններից անվիճելի կարգով գանձվում ե ամբողջ տարվա պարտավորությունը:

Անհատական տնտեսությունների կողմից իրենց պարտավորությունները խմբովին կամ չարամտորեն չկատարելու դեպքում հանցավորները դատական պատասխանատվության են յենթարկվում ՀՍԽՀ Քրեական Որենսդրքի 87-րդ հոդ. համաձայն:

14. Անպայման արգելվում ե իշխանության տեղական մարմիններին և մթերող մարմիններին թույլ տալ հանդիպական պլաններ կամ կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների վրա հացահատիկ հանձնելու այնպիսի պարտավորություններ դնել, վորոնք գերազանցում են այս վորոշմամբ սահմանված հեկտարային նորմաներից: Պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունները կատարելուց հետո, բոլոր ավելցուկները մնում են կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների լիակատար տնօրինության տակ:

15. Գյուղատնտեսական մթերքների Մթերման Կոմիտեյի ՀՍԽՀ Լիազորին առաջարկվում ե հնդորյա ժամկետում հրատարակել այս վորոշումը կյանքում կիրառելու վերաբերյալ հրահանգ և սահմանել տեղերի կենդանի հրահանգում, խիստ վերահսկողություն և հաշվետվություն հացահատիկի հանձնման ընթացքի մասին:

Ժողկոմխորհի նախագահ՝ Ս. Տ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ Ս. ԱԿՈՊՈՎ

1934 թ. մարտի 4

Յերևան.

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

Հացահատիկ հանձնելու նորմաները ՀՍԽՀ հինգ շրջաններում իջեցնելու մասին

1934 թ. մարտի 20-ին.

Ի փոփոխումն ՀՍԽՀ Ժողկոմխորհի և ՀԿ (բ)Կ Կենտկոմի ս.թ. մարտի 4-ին՝ «Կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից 1934 թ. բերքից պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելու մասին» վորոշման («Խ.Հ.» 1934 թ. մարտի 6) 1 հոդվածի, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և (Հ.Կ.(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—

1. Անհրաժեշտ համարել իջեցնել հացահատիկ հանձնելու նորմաները ՀՍԽՀ Աբարանի, Արթիկի, Գորիսի, Իջևանի և Կոտայքի շրջաններում:

2. Նախորդ հոդվածում մատնանշված շրջանների համար սահմանել հացահատիկ հանձնելու հետևյալ նորմաները.—

Շրջանները	Մտկայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների		Մտկայանների կողմից սպասարկվող խոշոր անտեսությունների	
	Բոլոր հացահատիկների հանձնման վերջին նորման	Վորից՝ ցորեն	Բոլոր հացահատիկների հանձնման վերջին նորման	Վորից՝ ցորեն
1. Աբարան	40	45	75	80
2. Արթիկ	40	40	75	75
3. Գորիս	—	—	60	60
4. Իջևան	—	—	35	35
5. Կոտայք	—	—	70	75

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Ս. Տ.—ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի քարտուղար՝
ՍՏ. ԱԿՈՊՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1934 Թ. ԲԵՐԲԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԽՍՀՄ ԺԿԽ-Ի ՅԵՎ ՀԱՄ Կ (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման չափը յուրաքանչյուր կոլտնտեսության համար հաշվում է ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորը:

2. Պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելու հաշվարկը կատարվում է հետևյալի հիման վրա.

ա) ըստ հացահատիկային մշակույթների (կուլտուրաների) դարնանացանի և աշնանացանի պլանների, որ հաստատված են տվյալ կոլտնտեսության համար շրջգործկոմի կողմից.

բ) մի հեկտարից հացահատիկի հանձնման նորմաների համաձայն, որ հաստատված են ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Մթերման Կոմիտեյի կողմից և հրապարակված են ՀՍԽՀ ԺԿԽ-ի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումով տվյալ վարչական շրջանի համար ՄՏ Կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար առանձին և ՄՏ Կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների համար առանձին:

3. Յուրաքանչյուր կոլտնտեսության համար կիրառվում է հացահատիկի պարտադիր հանձնման միայն մեկ նորմա. կամ ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված նորման, կամ ՄՏԿայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված նորման:

Անպայմանորեն արգելվում է հացահատիկի պարտադիր հանձնման հաշիվներն անել միևնույն կոլտնտեսության համար՝ հանձնման յերկու նորմաներով:

Որինակ՝ ցանքսերի մի մասի համար ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների նորմաներով և ցանքսերի մյուս մասի համար ՄՏԿայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների նորմաներով և այլն:

4. Կոլտնտեսությունների համար հացահատիկի պարտադիր հանձնման չափը վորոշելուց առաջ, ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորները պարտավոր են կազմել իրենց շրջանի բոլոր կոլտնտեսությունների ցուցակը, բաժանելով նրանց ՄՏԿայանների կողմից սպասարկվող և ՄՏ Կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների, մատնանշելով յուրաքանչյուր կոլտնտեսության համար աշնանացան ու դարնանացան մշակույթների պլանները, առանձնացնելով ցորենը:

Կոլտնտեսությունների ցուցակը պարտավորությունները հաշվելուց առաջ պետք է ստուգված լինի յերկու կողմից: Նախ համապատասխանում է արդյոք բոլոր կոլտնտեսությունների համար ցանքսերի գումարն ամբողջովին վերցրած, ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների վերաբերյալ, այնպես ել ցորենի վերաբերյալ առանձին, տվյալ շրջանի կոլտնտեսությունների համար հանրապետության կողմից հաստատված ցանքսերի պլանին, յերկրորդ համապատասխանում է արդյոք ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների ցանքսի պլանների գումարն այդ կոլտնտեսությունների համար, հանրապետության կողմից հաստատված ցանքսերի պլանին:

Ծանոթ. 1.— Պարտադիր հանձնումը տարածվում է տարեկանի, ցորենի, բակլային կուլտուրաների (սիսեռ, վոսպ, լոբի և այլն) և այլ մշակույթների վրա (գարի, վարսակ, կորեկ, հնդկացորեն, յեգիպտացորեն, հաճառ և այլն):

2. Կերային խոտաբույսերի, սորգո, բանջարանոցային, տեխնիկական, ձիթենու և այլն ցանքսերը,

պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման չափերը վորոշելու ժամանակ, հաշվի չեն առնվում։

5. ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների ցուցակը սահմանելու ժամանակ ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի լիազորները պետք է ղեկավարվեն.

ա) կոլտնտեսության և ՄՏԿայանի միջև արտադրական սպասարկման համար պայմանագրերի առկայությամբ, այսինքն ՄՏԿայանի կողմից բնավարքով վարձատրվող աշխատանքներ կատարելու համար.

բ) նրանով, վոր ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար հանձնման սահմանված նորմաները տարածվում են միայն այն բանակությամբ կոլտնտեսությունների վրա, վորոնց աշնանացան և գարնանացան մշակույթների ցանքսերի պլանների ընդհանուր գումարը չի գերազանցում ցանքսերի այն պլաններից, վոր հաստատված են ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից ՄՏԿայանների սպասարկվող կոլտնտեսությունների համար։

Ծանոթություն.—1. Այն դեպքերում, յերբ շրջանների միջև գոյություն ունեցող պայմանագրերով ընդգրկված կլինի այնպիսի քանակությամբ կոլտնտեսություններ, վորոնց ցանքսերի ընդհանուր տարածությունը տվյալ շրջանի համար սահմանված պլանից ավելի յե,— ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորը պարտավոր է այդ մասին հայտնել Հանրապետական լիազորին և այդպիսի դեպքերում ղեկավարվել նրա ցուցումներով։

2. Այն կոլտնտեսությունների նկատմամբ, վորոնք կսպասարկվեն պարտավորագրերը հանձնելուց հետո նոր կազմակերպված ՄՏԿայանների կողմից, շրջանային լիազորը պարտավոր է պարտավորագրերը փոխել նորերով՝ ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար վորոշված նորմաներով միայն այն դեպքում, յեթե ՄՏԿայանների և կոլտնտեսությունների միջև կնքված կլինեն արտադրական պայմանագրեր, վորոնցով նախատեսվում են 1934 թ. բերքից բնավարձով վարձատրման յենթակա աշխատանքներ և նախատեսված է կոլտնտեսության հացահատիկի կալսումը ՄՏԿայանի կալսիչ մեքենայով։

3. Կոլտնտեսությունների և ՄՏԿայանների միջև կնքած ագրոնոմիական, կուլտուր-կենցաղային, կազմակերպչական և այլ սպասարկման պայմանագրերը, վորոնց համար բնավարձի կարգով վարձատրություն չի պահանջվում, իրավունք չի տալիս նման կոլտնտեսությունների նկատմամբ կիրառելու՝ ՄՏԿայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված հանձնման նորմաները։

6. Այն դեպքում՝ յերբ կհաստատվի, վոր այս կամ այն կոլտնտեսությունները, վորոնք ՄՏԿայանի հետ կնքած պայմանագրեր ունեն արտադրական սպասարկման համար, սակայն փաստորեն արտադրականապես չեն սպասարկվում ՄՏԿայանի կողմից և այդ կոլտնտեսության բերքի կալսումը ՄՏԿայանի կողմից չի կատարվում,—շրջանային լիազորն ՄՏԿայանի և կոլտնտեսության միջև կնքած պայմանագրերը վերացնելու համար հայտնում է ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի Լիազորին։

Այդ հարցը կենտրոնում ՀԺԿ-ի հետ լուծելուց հետո Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորն անմիջապես վոչնչացնում է մինչ այդ տրված պարտավորագրերը, փոխարինելով նորով, վորը հաշված պիտի լինի ՄՏԿայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված հանձնման նորմաներով։

7. Յեթե յերկու կոլտնտեսությունները միանում են, նրանց պարտավորագրերը հանձնելուց հետո և յեթե պարզվում է, վոր այդ կոլտնտեսությունից մեկն սպասարկվում է ՄՏԿայանի կողմից, իսկ մյուսը չի սպասարկվում, միացյալ (խոշորացած) կոլտնտեսությունն առաջադրանք է ստանում ՄՏԿայանի կողմից սպասարկվող կոլտնտեսությունների նորմաներով։

Կոլտնտեսությունները յերկու կամ մի քանի կոլտնտեսությունների բաժանվելու դեպքում, յուրաքանչյուր կոլտնտեսության համար առաջադրանքի չափը վորոշվում է, նայած նրան, թե սպասարկվում է կամ չի սպասարկվում նոր կազմակերպված կոլտնտեսությունը ՄՏԿայանի կողմից։

8. Յուրաքանչյուր կոլտնտեսության համար պարտավորագրի չափը հաշվում է բոլոր հացահատիկային մշակույթների համար ամբողջովին վերցրած, և ցորենի համար առանձին:

9. Կոլտնտեսությունների կողմից առանձին մշակույթների պարտադիր հանձնման չափը հաշվում է՝

ա) ցորենի համար 1933 թ. աշնանը և 1934 թ. գարնան շրջգործկոմի կողմից կոլտնտեսության սահմանված՝ ցանքի պլանի հիման վրա, նույնպես և ՀՍԽՀ ԺԿԽ-ի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի վորոշման մեջ հրապարակված յուրաքանչյուր շրջանի համար մի հեկտարից այդ մշակույթներից յուրաքանչյուրի հանձնման նորմայի հիման վրա:

«Այլ» հացահատիկային մշակույթների համար այն է տարեկան, բակլային, վարսակի, գարու, յեղիպտացորենի, կորեկի, հնդկացորենի, հաճարի, սերմացու վիկի—հացահատիկի պարտադիր հանձնման չափը վորոշվում է այն մնացորդով, վոր տարվում է կոլտնտեսության համար բոլոր հացահատիկային մշակույթների առաջադրանքի սահմանված չափից, հանելով կոլտնտեսության համար ցորենի պարտադիր հանձնման սահմանված քանակը:

Որինակ. Կոլտնտեսությունը, պլանների համաձայն, պարտավոր է ցանել՝ աշնանացան մշակույթներ—100 հեկտար, գարնանացան —400 հեկտար: Տվյալ շրջանի մի հեկտարից հանձնելու նորման բոլոր հացահատիկային մշակույթների համար սահմանված է 50 կիլոգր. մի հեկտարից:

Այսպիսով, պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման ընդհանուր չափը կազմում է՝ 50 կիլոգր. (100 հեկտարX 400 հեկտար)=250 ցենտներ:

Առանձին մշակույթների նկատմամբ տվյալ կոլտնտեսության համար հանձնման չափը հաշվում է հետևյալ կերպ.

Ցորենի նկատմամբ. Կոլտնտեսությունը, պլանների համաձայն, պետք է ցանի 50 հեկտար աշնանացան ցորեն և 100 հեկտար գարնանացան: Մի հեկտարից ցորենի հանձնման նորման կոլտնտեսությունների համար սահմանված է 60 կլգր., ուրեմն կոլտնտեսությունը պետք է հանձնի 60 կլգր. (100+50)=90 ցենտ:

Այլ կուլտուրաների նկատմամբ. Կոլտնտեսությունների

կողմից հանձնման յենթակա «այլ» (մնացած) հացահատիկի մշակույթների քանակը կազմում է 250—90 =160 ցենտներ, վորը հանձնվում է այլ կուլտուրաներով համաձայն նրանց ցանքսերի տարածության կամ այդ կուլտուրաներից վորևե մեկով:

10. Կոլտնտեսությունների համար պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունները հաշվելու ժամանակ, ԺԿԽ Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորները կարող են հետևյալ դեպքերին հանդիպել:

ա) Այլ մշակույթների հանձնման նորմաները անհամեմատ ավելի բարձր դուրս կգան, ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների շրջանային սահմանված միջին նորմաների նկատմամբ, այնպես էլ բերքատվության համեմատությամբ: Այդ դեպքում կոլտնտեսությունը հանձնում է հացահատիկն այն չափով, վոր նշանակված են պարտավորագրում մշակույթների ընդհանուր գումարի համեմատ, ըստ վորում կազմակերպությունն իրավունք ունի այլ մշակույթների հաշվին հանձնել հիմնական մշակույթներ:

բ) Ամբողջ պարտավորագրերի մեջ մատնանշված հացահատիկի հանձնման չափը լրացվում է ցորենով: Այդ դեպքում այլ մշակույթներն ստանալու հաշվարկը չի կատարվում:

գ) Պարտավորագրերի համաձայն ցորենի հանձնումը, վոր հաշվում է այդ մշակույթի համար սահմանված նորմայով, դերազանցում է վողջ պարտավորագրերի մեջ մատնանշված հանձնման չափից: Այդ դեպքում հիմնական մշակույթների նորմաներով հաշված հանձնման չափերի ու միջին նորմայով հաշված հանձնման չափերի միջև յեղած տարբերությունը հանձնում է հիմնական մշակույթներից մեկից:

դ) Ցորենի հանձնման հաշված չափն իր ամբողջ գումարով այնպիսի քանակություն է կազմում, վորը պակաս է՝ բոլոր մշակույթների համար կոլտնտեսություններից հասանելիք միջին նորմայով հաշված հանձնման ընդհանուր չափից, իսկ այլ մշակույթներ կոլտնտեսությունը չի ցանել: Այդ դեպքում կոլտնտեսությունը հանձնում է «այլ մշակույթներին» ընկնող տարբերությունն ամեն մի ցանկացած հիմնական մշակույթից:

11. Անպայման արգելվում է կոլտնտեսությունների վրա հացահատիկ հանձնելու այնպիսի պարտավորություններ դնել, որոնք գերազանցում են սահմանված հեկտարային նորմաներից:

II. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

12. Ցելնելով անհատական տնտեսությունների համար հանրապետական կազմակերպությունների կողմից սահմանված աշնանացան ու գարնանացան մշակույթների ցանքսի պլաններից, շրջգործկոմը սահմանում է մենատնտեսների ցանքսերի պլանները ըստ գյուղխորհուրդների անպայման զտելով ցորենը:

13. Անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկի հանձնման չափերը որոշելու համար գյուղխորհուրդները մարտի 10-ից վոչուչ կազմում են՝ տվյալ գյուղխորհրդի գործունեության շրջանի անհատական տնտեսությունների ցուցակները, նրանց մեջ լրացնելով հետևյալ ցուցանիշները՝

ա) ցուցակագրվող տնտեսությունների համարներն ըստ կարգի.

բ) անհատական տնտեսության գլխավոր անձի ազգանունը, անունը և հայրանունը.

գ) յուրաքանչյուր անհատական տնտեսության հացահատիկի ցանքսի պլանը՝ 1933 թ. աշնանացան մշակույթների ցանքսի պլանները առանձին և 1934 թ. գարնանացանի պլանները առանձին զատելով (նրանց թվում) ցորեն առանձին:

14. Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորն անպայման ստուգում է գյուղխորհուրդների կողմից կազմած անհատական տնտեսությունների ցուցակը, նկատի ունենալով նախ՝ համապատասխանում է արդյոք անհատական տնտեսությունների ցանքսի ընդհանուր չափը՝ շրջգործկոմի կողմից տվյալ գյուղխորհրդի մենատնտեսների համար ցանքսի սահմանված պլանին, ինչպես բոլոր՝ հացահատիկային կուլտուրաների նկատմամբ, այնպես էլ ցորենի նկատմամբ առանձին, յերկրորդ՝ համապատասխանում է արդյոք շրջանի բոլոր անհատական տնտեսությունների ցանքսի պլան

ների գումարն ամբողջովին վերցրած տվյալ շրջանի անհատական սեկտորի համար հանրապետության կողմից ցանքսի հաստատված պլանին:

15. Պարտադիր կարգով գյուղխորհուրդների կողմից ցուցակագրվում են այն անհատական տնտեսությունները, որոնց հացահատիկային մշակույթների ցանքսերի պլաններ են տրված 1933 թ. աշնան և 1934 թ. գարնան համար, նույնպես և այն անհատական տնտեսությունները, որոնց ցանքսի պլան է տված՝ կամ միմիայն աշնանացան, կամ միմիայն գարնանացան հացահատիկային մշակույթների համար:

Այդպիսի անհատ տնտեսություններ պարտավորվում են պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնելը:

Ծանոթություն.— Ցուցակների մեջ չեն մտցվում՝

ա) այն յերկաթուղային բանվորներն ու ծառայողները, որոնք յերկաթուղու ոտարացման շերտում ցանքսեր են կատարում, որ չեն մտնում ցանքսերի պլանի մեջ:

բ) Անտառային այն պահակները, որոնց հատկացված հողամասերը գտնվում են անտառային պահակների կողմից պահպանվող անտառային տեղամասերի տերիտորիայում, այն պայմանով միայն, յեթե այդ աշխատողները գյուղում ցանքսեր չունեն:

գ) Այն անհատական տնտեսությունները, որոնց առանձին հողամասեր չեն հատկացրված և որոնք բնամերձ հողեր չունեն:

դ) Այն բանվորներն ու ծառայողները, քաղաքացիական պատերազմի հաշմանդամներն ու թոշակառուները, որոնք չեն ոգտվում ցանքսային հողամասերից, թեպետ նրանք ցանքսեր են կատարում իրենց բնակավայրերի բնամերձ հողամասերում:

16. Կուլակային տնտեսությունները, նրանց թվում նաև ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. ապրիլի 7-ի № 63/564 վորոշումով նախատեսվածները, առանձնացվում են և նրանց համար կազմվում է առանձին ցուցակ և այդ տնտեսությունների նկատմամբ մեկ հեկտարից հանձնման նորման վորոշվում է մեկ ու կեսի [illegible] հանձնման այն նորմայի համե-

1006/2.9459
3087
ՀԱՅ. ՍՍՀ Գլ. Պետ. Գրադարան
ՀԱՅԿ — ՍՍՀԱ
Գ. Ա. Ալեքսանյան

մատությամբ, որը սահմանված է տվյալ գյուղխորհրդի սահմաններում գտնվող մենատնտեսությունների համար:

17. Պետությանը հացահատիկի հանձնումն այն մենատնտեսների պարտավորագրերով, որոնք կոլտնտեսության մեջ են մտել բերքահավաքից առաջ, կոլտնտեսության կողմից կատարվում է տվյալ կոլտնտեսության համար սահմանված նորմաներով. կոլտնտեսության վարչությունը նման դեպքերում վերցնում է կոլտնտեսության մեջ մտած մենատնտեսներից նրանց հանձնած պարտավորագրերը և այդպիսիները վերադարձվում է հուլիսի 15-ից վոչ ուշ ԺԿՄ-ի Մթերման Կոմիտեի շրջանային լիազորին, որն այդ պարտավորագրերի փոխարեն կոլտնտեսության համար դուրս է գրում նոր (լրացուցիչ) պարտավորագրեր, հաշվելով այդ պարտավորագրերը հացահատիկի հանձնման քանակը յելնելով տվյալ կոլխոզին տված նորմայից և կոլտնտեսության մեջ նոր մտած մենատնտեսների հացահատիկային ցանքսերի պլաններից:

Անհատական տնտեսությունները, որոնք կոլտնտեսության մեջ են մտել բերքահավաքի կամպանիան սկսելուց հետո, հացահատիկը հանձնում են իրենք անձամբ, կամ կոլտնտեսության միջոցով նրանց տված պարտավորագրերի համաձայն, այդպիսին մենատնտեսների համար սահմանված նորմաներով:

18. Այս հրահանգի 12, 13, 14 և 15 հոդվածների համաձայն, գյուղխորհուրդների կողմից մի որինակից կազմած անհատական, չքավոր-միջակային և կուլակային տնտեսությունների ցուցակները մարտի 15-ից վոչ ուշ ներկայացվում են ԺԿՄ-ի Մթերման Կոմիտեի շրջանային լիազորի միջոցով շրջգործկոմի նախագահության քննության համար:

19. Շրջանային լիազորը, շրջգործկոմի կողմից ցուցակները հաստատելուց հետո 5 որվա ժամանակամիջոցում հաշվում է ամեն մի տնտեսության կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկի հանձնման պարտավորությունների չափերը, նշելով արդյունքները ցուցակների մեջ: Հացահատիկի հանձնման չափը վորոշելիս ԺԿՄ-ի Մթերման Կոմիտեի շրջլիազորը ղեկավարվում է հետևյալով:

ա) շրջգործկոմի նախագահության կողմից հաստատված ցուցակով.

բ) ցուցակում ցույց տված յուրաքանչյուր անհատական տնտեսության ցանքսերի տարածությամբ.

գ) մի հեկտարից հացահատիկի հանձնման նորմայով վորը 5—10% ավելի բարձր պիտի լինի, քան տվյալ շրջանի ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլխոզների նորման է.

Անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկի հանձնման պարտավորությունների չափերի հաշվարկը ԺԿՄ-ի Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը կատարում է ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների համար, ամբողջովին վերցրած այնպես էլ ցորենի համար առանձին բաշխելով բոլոր մշակույթների հանձնման հանրագումարն ըստ ամիսների:

Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը հացահատիկի հանձնման չափերի հաշվարկը վերջացնելուց հետո, հանում է և լրացրած ցուցակների ճիշտ պատճենները, որը պահում է իր գործում:

20. Անպայման արգելվում է անհատ տնտեսությունների վրա հացահատիկ հանձնելու այնպիսի պարտավորություն դնել, որը գերազանցում է սահմանված հեկտարային նորմայից:

III. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Յուրաքանչյուր կոլտնտեսության և անհատ տընտեսության հանձնվում է գրավոր, պատշաճ ստորագրություններով և Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեի շրջլիազորի կնիքով կնքված պարտավորագիր պետությանը հացահատիկ հանձնելու չափի մասին:

Կոլտնտեսության հանձնվող պարտավորագրերը ստորագրում են շրջգործկոմի նախագահը և Մթերումների Կոմիտեի շրջլիազորը:

Պարտավորագրերը պիտի խնամքով և լրիվ լրացնել առանց վորևե ջնջումների և բացթողումների: Պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափն անպայման պետք է գրել տառերով:

Այս կարգով լրացրած պարտավորագրերը հանձնվում են անպայման տվյալ կոլխոզի նախագահին կամ նրա տեղակալին:

Կոլխոզի նախագահը կամ նրա տեղակալը պարտավորագիրը ստանալու առթիվ ստորագրում է մթերման շրջիագորի մոտ գտնվող ցուցակում: Անպայման պետք է ցույց տալ պարտավորագրի հանձնման ժամկետը: (Այդ ցուցակում բացի հացահատիկի հանձնման քանակի պիտի ցույց տված լինի և պարտավորագրերի սերիան և համարը):

Ծանոթություն.—Այն պարտավորագրերի վրա վորոնք տրվելու են սերմաբուծական կոլխոզներին Մթերման Կոմիտեյի շրջիագորները նշում—են «Գոսսորտ ֆոնդ» (Պետսորտֆոնդ), վորի համար Սոյուզսեմենովոդը համապատասխան քանակությամբ պատրաստում է կնիքներ «Պետսորտֆոնդ»:

22. Զադոտզեռնոյի կամ Սոյուզսեմենովոդի հացամթերման կայաններին առանձին կոլխոզներին կցելիս թույլատրվում է յելնելով տեղի պայմաններից կցել այս կամ այն կոլխոզը հարևան շրջանի մթերման կոմիտեյին կամ յերկու մթերման կայաններին:

23. Մենատնտեսներին հանձնվելիք պարտավորագրերը լրացվում են մթերման շրջիագորի կողմից համաձայն շրջգործկոմի նախագահության հաստատված ցուցակի և այդ ցուցակում նշած հացի հանձնման քանակի:

Կուլակ տնտեսություններին հանձնվելիք պարտավորագրերի վրա դրվում է կնիքը—«կուլակային տնտեսություն»:

24. Մենատնտեսների համար լրացրած մթերման շրջիագորի կողմից և նրա կողմից ստորագրված պարտավորագրերը մենատնտեսների մի ցուցակի հետ միասին ուղարկվում է համապատասխան գյուղխորհրդին մենատնտեսներին հանձնելու համար, առաջարկելով պարտավորագրերի հանձնման մասին ստորագրել տալ այդ ցուցակում, վորի մեջ մթերման շրջիագորը նշում է նույնպես պարտավորագրերի սերիան և №-ը (ցուցակի յերկրորդ որինակը մնում է մթերման շրջիագորի մոտ):

25. Ստանալով մթերման շրջիագորից պարտավորագրերը գյուղխորհրդի նախագահը ստորագրում է այդպիսին և յերեք որվա ընթացքում անձամբ հանձնում համապատասխան մենատնտեսության գլխավոր անձին կամ տվյալ պահին նրան փոխարինող չափահաս ընտանիքի անդամին, վերցնելով նրա ստորագրությունը ցուցակի վրա և նշելով նույն ցուցակում հանձնման ժամկետը:

26. Այն դեպքում, յերբ մենատնտեսության գլխավոր անձը կամ նրա փոխարինողը հրաժարվում է ստանալ պարտավորագիրը և ստորագրել ցուցակում, գյուղխորհրդի նախագահն այդ մասին կազմում է արձանագրություն և այդպիսով պարտավորագիրը համարվում է հանձնված և մնում է գյուղխորհրդում, իսկ արձանագրության պատճենն ուղարկում տվյալ մենատնտեսության: Միաժամանակ գյուղխորհուրդն այդպիսի մենատնտեսներին կանչում է քրեական պատասխանատվության համաձայն 1934 թ. հացամթերման որենքի 13-րդ կետի:

27. Մենատնտեսներին գյուղխորհրդի կողմից հացահատիկ հանձնելու պարտավորագիրը տալուց 20 որվա ընթացքում ժողկոմխորհի Մթերումների Կոմիտեյի շրջիագորը պարտավոր է ստուգել բոլոր գյուղխորհուրդներում թե արդյոք լրիվ են հանձնված պարտավորագրերը յուրաքանչյուր մենատնտեսության:

28. Ժողկոմխորհի Մթերումների Կոմիտեյի շրջիագորը հայտնում է գյուղխորհրդին, վորի հողամասում գտնվում է տվյալ կոլխոզը, նույնպես և Զադոտեզեռնոյի, Սպառկոոպի կամ Սոյուզսեմենովոդի մթերման կայանին, վորին կցված է տվյալ գյուղխորհրդի կոլխոզները և մենատնտեսներն ամեն մի կոլխոզի հացի հանձնման քանակն ըստ առանձին կուլտուրաների, իսկ մենատնտեսների վերաբերյալ նրանց բոլորի կողմից հացի հանձնման քանակը նույնպես ըստ առանձին կուլտուրաների, միաժամանակ ուղարկելով ամեն մի գյուղխորհրդին կցված կուլակ (ունևոր) տնտեսությունների ցուցակները:

IV. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

29. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու

պարտավորությունների կատարման հաշվին ընդունվում են միայն հետևյալ մշակույթները՝ ցորեն, տարեկան, բակլա-յիններ, վարսակ, գարի, կորեկ, հաճար, սերմացու վիկա:

Կոլտնտեսությունների և անհատական տնտեսություն-ներին հացահատիկ հանձնելու ժամանակ իրավունք է վերա-պահվում մի մշակույթը փոխարինել մյուսով, սակայն այն պայմանով, որ՝

ա) ցորենը չի կարելի փոխարինել վոչ մի այլ մշակույ-թով.

բ) այլ մշակույթների հանձնման պարտավորագրերի հաշվելն կարելի է հանձնել հանձնողի ընտրությամբ, հե-տևյալ մշակույթները՝ վարսակ, գարի, յեգիպտացորեն, հնդկացորեն, կորեկ, սերմացու վիկա, հաճար: «Այլ» մշա-կույթները, հանձնողի ընտրությամբ, կարելի է փոխարի-նել ցորենով:

30. Պետությանը հանձնվելիք ամբողջ հացահատիկը կոլ-տնտեսություններն ու անհատական տնտեսությունները սեփական տարայով պետք է փոխադրեն Զագոտզեռնոյի հաստատված մթերման կայանները: Պետությանը պարտա-դիր կերպով հանձնվող հացահատիկի ընդունումը տեղի է ունենում Զագոտզեռնոյի կայաններում կամ Զագոտզեռնո-յի հանձնարարությամբ վերոհիշված կազմակերպություն-ների կայաններում:

Այն դեպքում, երբ վորպես բացառություն կթույլա-տրվի ժամանակավոր, ոժանդակ, խորքային (հեռավոր) կայաններ բանալ, այդ կայաններին հացահատիկ հանձնող կոլտնտեսություններից ու անհատական տնտեսություն-ներից Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեի կողմից սահման-ված ձևով, պարտավորություն է վերցվում, այն մասին, որ նրանք վորոշված ժամկետում և իրենց փոխադրական միջոցներով պետք է ժամանակավոր մթերման կայանները հանձնված հացահատիկը փոխադրեն Զագոտզեռնոյի հիմ-նական պահեստները, վորի համար հացահատիկի հանձնո-ղին վարձատրում են՝ մերձկայարանային ու խորքային կա-յանների գների միջև յեղած տարբերության չափով:

31. Կոլտնտեսության և անհատական տնտեսության հա-մար վորոշված պարտավորությամբ հանձնվելիք հացահա-

տիկը պետք է փոխադրվի Զագոտզեռնոյի, Սոյուզսեմենովո-դի կամ այլ մթերման այն կայանը, որ մատնանշված է տվյալ կոլտնտեսության կամ անհատական տնտեսության պարտավորագրի մեջ: Մյուս մթերման կայանները, բացի տվյալ կոլտնտեսության կամ անհատական տնտեսության համար պարտավորագրի մեջ մատնանշվածից, իրավունք չու-նի ընդունել այդ պարտավորագրի կատարման հաշվին բերած հացահատիկը:

32. Կոլտնտեսությունների և անհատական տնտեսու-թյունների պարտավորագրերի հաշվին հանձնած հացահա-տիկն ընդունվում է գոյություն ունեցող պետական գներով:

33. Սերմաբուծական կոլտնտեսությունները, վորոնք համաձայն Հողժողկոմատի կողմից ներկայացվող և Ժող-կոմխորհի Մթերման Կոմիտեյի Հայաստանի Լիազորի կող-մից հաստատված ցուցակի համաձայն մտնում են կայուն ցանցի մեջ, վորպես մաքուր տեսակավոր սերմացու հաց-հատիկ ցանողներ ու այդպիսին Պետսերմֆոնդին մատակա-բարողներ, կատարում են հացահատիկի հանձնման իրենց պարտավորությունները, գոյություն ունեցող սերմացուի ստանդարտների համաձայն, սերմացուի կոնդիցիաներին բա-վարարող մաքուր տեսակի հացահատիկով:

34. Արգելվում է պարտադիր հանձնումների հաշվին ըն-դունել այնպիսի հացահատիկ, վոր իրեն մեջ խոնավություն է պարունակում հետևյալ սահմաններից ավելի՝

ա) հացահատիկային մշակույթների նկատմամբ 17%:

բ) վիկի և բակլայինների նկատմամբ (բացի լոբուց 20 %.

գ) լոբու նկատմամբ . . . . . .23 %.

դ) յեգիպտացորենի նկատմամբ (կոթրուճներով) 25 %.

35. Այն հացահատիկը, վորի աղբային խառնուրդը գե-րազանցում է տարեկանի ու ցորենի համար 5 %-ից, մյուս հա-ցահատիկային և բակլային մշակույթների համար 8 %-ից, այն հացահատիկը, վորը 2 %-ից ավելի վնասակար խառ-նուրդ ունի (հաճարի ժանդաղ 0,5 %, գեղձատերև մատի-տեղ—0,1 %), այն հացահատիկը, վոր ծլած հատիկներ ու աղբային խառնուրդ ունի, ընդհանուր առմամբ 15 %-ից ա-վելի, նույնպես և այրված ու նեխված հացահատիկը պար-

տավորագրերի կատարման հաշվին չի ընդունվում և վատորակ է համարվում:

36. Նման վատորակ հացահատիկ հանձնելու յուրաքանչյուր փորձի դեպքում, մթերման կայանի վարիչը պարտավոր է արձանագրություն կազմել, մատնանշելով կոլտնտեսության անունը կամ մենատնտեսի ազգանունը, վորին պատկանում է հացահատիկի տվյալ պարտիան և այն անձի, վորը նման հացահատիկ է բերել: Արձանագրության մի որինակը հանձնվում է քննչական մարմիններին՝ հացահատիկը փչացնելու մեղավորներին հայտնաբերելու ու նրանց դատական պատասխանատվության կանչելու համար:

Հացահատիկ հանձնողները, վորոնք վատորակ հացահատիկ են բերել, նույնպես և մթերման ապարատի պաշտոնյաները, վորոնք մեղավոր են վատորակ հացահատիկ ընդունելու գործում, պատասխանատվության յեն կանչվում այն կարգով, վոր նախատեսված է ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի 1933 թ. մայիսի 22-ի 23-րդ պարզաբանումով:

37. Գոյություն ունեցող դներով ընդունվում է հետևյալ բազային կոնդիցիաների համապատասխանող հացահատիկը:

Պետության հանձնվելիք հացահատիկների բազիսային կոնդիցիաները 1933/34

N N գտ.	Կուլտուրաների անունները	Գոտի	Մշակման ձևը	Սովորական դիմադրություն	Ավելացված դիմադրություն
1	Ցարեկան	715	Զոր և	1 տոկոս.	1 տոկոս.
2	Ցորեն ոչնան . . .	755	»	1 »	3 »
3	Ցորեն դարնան փափուկ .	755	»	1 »	2 »
4	Ցորեն դարնան կոշտ . .	760	»	1 »	2 »
5	Վարսակ	460	»	1 »	2 »
6	Գարի	610	»	2 »	2 »
7	Հաճար	—	»	2 »	2 »
8	Կորեկ	—	»	2 »	1 »
9	Ցեղիպացորեն . . .	—	խոնավ	1 »	2 »

38. Պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության հաշվին հացահատիկ ընդունելիս, ամբողջովին հաշվի յե առնվում միայն այն հացահատիկը, վորն իր վորակով համապատասխանում է վերոհիշյալ բազիսային կոնդիցիաներին, կամ իր աղբային խառնուրդով (բացի վնասակարից) և խոնավությամբ չեղվում է այդ կոնդիցիաներից 2 տոկոսից վոչ ավելի:

39. Այն դեպքում, յերբ հանձնվող հացահատիկի աղբային խառնուրդի և խոնավության տոկոսն ավելի յե, քան այն նախատեսված է վերոհիշյալ կոնդիցիայի սահմաններով (2 % բաղխից ավելի), դուրս է հանվում այդ ամբողջ պարտիայից աղբային խառնուրդի և խոնավության տոկոսների ավելցուկը և պլանի դիմաց չի հաշվում:

Հացահատիկի հանձնման պարտիայի քաշի դեղչերը հաշվելու ժամանակ, աղբային խառնուրդն ու խոնավությունը հաշվի յե առնվում առանձին:

Աղբային խառնուրդի և խոնավության այդ դեղչերի հաշվարկը կատարվում է տվյալ պարտիայի վորակի փաստական ցուցանիշների համեմատ, հետևյալ կերպով.

ա) կոտորակային մասերը, մինչև կեսը ներառյալ, դուրս են գցվում.

բ) կեսից ավելի կոտորակային մասերն ընդունվում են վորպես ամբողջ տոկոսներ:

40. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պարտավորության հաշվին մթերման կայանը հանձնած հացահատիկի համար կայանը հաշվարկ է կատարում սահմանված պետական դներով, կիրառելով զեղչ՝ հացահատիկը ցածր վորակ ունենալու դեպքում:

41. Հացահատիկի վորակական գնահատումը հաստատվում է ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Մթերման Կոմիտեյի հատուկ վորոշմամբ:

42. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր հանձնման հաշվին հանձնված հացահատիկի հաշիվները մաքրում է Զադոտգեռնոյի կայանը կանխիկ դումարով: Կոլտնտեսության ցանկությամբ նրան հասանելիք դումարն ամբողջովին կամ մասամբ փոխանցվում է նրա ընթացիկ հաշվին:

43. Կոլտնտեսության ու անհատական տնտեսության կողմից նախորդ տարիների սերմացուների, պարենային ու

կերային վարկերի դիմաց վերադարձվող հացահատիկը, նույնպես և կոլտնտեսության կողմից ՄՏԿայանի կատարած աշխատանքի վարձատրության դիմաց տրվող հացահատիկը հանձնվում է և չի հաշվվում պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման դիմաց, այլ հաշվի յե առնվում որպես հատուկ սահմանված պլանների կատարում (վարկերի վերադարձնելը, ՄՏԿ-ի աշխատանքի բնավարձի կատարում և այլն):

Կոլտնտեսության կողմից հանձնվող հացահատիկի հաշվառումը— ի հաշիվ հացահատիկի պարտադիր հանձնման կամ վարկերի վերադարձման կամ ՄՏԿ-ի բնավարձի, կատարվում է բեռնագրերի մեջ կոլտնտեսության կողմից առած ցուցման հիման վրա:

Կտրականապես արգելվում է ընդունման փաստաթղթի մեջ միացնել տարբեր տեսակի ընդունումները՝ հանձնումներ հացահատիկի մթերման հաշվին, հանձնումներ ՄՏԿ-ի բնավարձի հաշվին և վարկերի վերադարձնելու հաշվին:

Հանձնման վերոհիշյալ տեսակի դիմաց պետք է անպայման տալ ընդունման առանձին անդորրագրեր:

44. Կոլտնտեսության կողմից պետսերմֆոնդի հետ կնքված պայմանագրերի դիմաց հանձնվող հացահատիկը հաշվի յե առնվում ի հաշիվ պարտադիր կերպով հացահատիկի հանձնման պարտավորությունների կատարման:

Կոլտնտեսություններից և անհատական տնտեսություններից պետսերմֆոնդի գծով ստացվող հացահատիկ ընդունվում է Սայուզսեմենովոդ միավորման կողմից, վորը գործում է Զագոտզեռնոյի հանձնարարությամբ միայն այն կայաններում, վորոնց ցանցը հաստատված է Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեյի լիազորի կողմից:

V. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՑԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

45. Յուրաքանչյուր կոլտնտեսությանը և անհատական տնտեսությանը հանձնած պարտավորագրի մեջ հատուկ սյունյակում մտցվում է՝ բացի պետությանը հացահատիկ հանձնելու չափից, որենքով սահմանված 2 % հավելում, վոր յենթակա յե հանձնման գյուղական ուսուցիչներին, գյուղատնտեսներին, բժշկական և անասնաբուժական աշխատողներին մատակարարելու համար: Այդ լրացուցիչ պարտավորությունների կատարումը տեղի պիտի ունենա այն ժամկետներից վոչ ուշ, վոր սահմանված են պետությանը հացահատիկ հանձնելու հիմնական պարտավորությունները կատարելու համար:

46. Այդ հավելումների հաշվին հանձնվող հացահատիկն ընդունվում է նույն պայմաններով, ինչ պայմաններով ընդունվում է պետությանը հանձնվող հացահատիկը (նույն կոնդիցիաների, գների հանձնման կայանի ու այլոց պահպանումը):

VI. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

47. Միակ փաստաթուղթը, վոր վկայում է կոլտնտեսությունների ու անհատականների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման մասին, հանդիսանում է ընդունման անդորրագիրը, վորը տրված է Զագոտզեռնոյի, Սայուզսեմենովոդի կամ այլ մթերող կայանի կողմից:

48. Ընդունման անդորրագիրը դուրս է գրվում յերեք օրինակից՝ մթերման կայանի կողմից պարտավորագրի հաշվին ընդունած հացահատիկի յուրաքանչյուր պարտիայի համար:

Անդորրագրի լրացումը պետք է կատարվի ճշտապահորեն ու խնամքով, անպայման մտցնելով անդորրագրի մեջ բոլոր ցուցանիշները, վոր սահմանված են անդորրագրի ձևով:

49. Հիմնական հանձնման և 2 տոկոսային հավելումների հաշվին ընդունած հացահատիկի համար դուրս է գրվում մի ընդհանուր անդորրագիր, առանց առանձնացնելու նրա մեջ վերոհիշյալ հավելումները:

Կայանի վարիչն ու հաշվառուն հաշվում են 2 տոկոսային հատկացումների ֆոնդի համար հատկացվելիք քանակը հետևյալ հաշվով, յուրաքանչյուր 102 փութ ընդունած հացահատիկից 2 փութ հացահատիկ հատկացվում է 2 տոկոսային հավելումների ֆոնդին: 2 տոկոսային հավելումների ֆոնդից հացահատիկը բաց է թողնվում կայանի կողմից Զագոտզեռնոյի հանրապետական գրասենյակների կարգադրությունների հիման վրա, վորը իր կողմից այդ դեպքերում ղեկավարվում է Ժողկոմխորհի համապատասխան ցուցմունքներով:

50· Մթերման կայանում դուրս գրվող անդորրագրերի յերեք օրինակից մեկ օրինակը տրվում է հացահատիկ հանձնողին, յերկրորդը մնում է կայանի գրամարկղում և կայանի համար արդարացուցիչ փաստաթուղթ է հանդիսանում, ինչպես նրա գրամական այնպես էլ նրա նյութական հաշվետվության համար, յերրորդ օրինակն ոգտագործվում է պարտավորագրերի կատարման հաշվառման համար՝ գյուղխորհրդի կողմից—անհատական տնտեսություններից ընդունած հացահատիկի համար և Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի կողմից կոլտնտեսություններից ընդունած հացահատիկի համար:

Ընդունման անդորրագրերի այդ պատճենները մթերման կայանն ուղարկում է ամեն որ (սուրհանդակի միջոցով կամ պատվիրած ծրարով) Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորին, սահմանված ձևի հաշվետու ամփոփման (սվոդկայի) հետ միասին, վոր կազմվում է յուրաքանչյուր վարչական շրջանի համար առանձին:

51· Կոլտնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու առաջադրանքի կատարման մասին՝ կոլտնտեսությունների վարչությունների ձեռքին գտնվող պարտավորագրերի մեջ նշումները կատարում են Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորները՝ կոլտնտեսության վարչության կողմից ներկայացրած ընդունման կայանի անդորրագրերի հիման վրա, անպայման համեմատելով այդ անդորրագրերը շրջանային լիազորների կողմից կոլտնտեսության անձնական հաշվում կատարած գրանցումների հետ:

52· Յեթե կոլտնտեսության կողմից հանձնման մասին ներկայացրված տվյալները չեն համապատասխանում Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի սեփական գրանցումներին, շրջանային լիազորը պարտավոր է յերեք որվա ժամանակամիջոցում անմիջականորեն մթերման կայանում ստուգել թե իրա մոտ ունեցած անդորրագրերը և թե կոլտնտեսության կողմից ներկայացրած անդորրագրերը, և յեթե հայտարերի, վոր կեղծ անդորրագրեր են տրված մթերման կայանի կողմից կամ ներկայացված կոլտնտեսության կողմից, պարտավոր է քրեական պատասխանատվության կանչել դրանում մեղավոր անձնավորություններին:

53· Պետությանը հացահատիկ հանձնելու առաջադրանքի կատարման մասին նշումներն անհատական տնտեսությունների պարտավորագրերի մեջ կատարվում է համապատասխան գյուղխորհուրդներում, հանձնողների կողմից ներկայացրած ընդունման կայանների անդորրագրերի հիման վրա: Այդ դեպքում ներկայացրած անդորրագրերը պետք է անպայման ստուգված լինեն գյուղխորհուրդների կողմից հանձնողի անձնական հաշվի մեջ արած սեփական գրանցումների հետ, համաձայն ընդունման անդորրագրերի այն պատճենների վրա, վորոնք ստացվել են շրջանային լիազորի միջոցով ընդունման կայաններից:

Հանձնողների պարտավորագրերի վրա նշումների կատարումն առանց նախորոք ստուգելու գյուղխորհրդի սեփական հաշվառման հետ, արգելվում է:

Ստուգման ժամանակ յեթե հայտնարերվի, վոր կեղծ անդորրագրեր են տրվել կամ ներկայացվել, գյուղխորհուրդը քրեական պատասխանատվության է կանչում այդ գործում մեղավոր անձնավորություններին:

54· Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության պարտավորագրի կատարման հաշվառումը, նույնպես և կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների պլանի կատարման հաշվառումը յուրաքանչյուր գյուղխորհրդի նկատմամբ ամբողջովին վերցրած, կատարում է Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորը, մթերման կայաններից նրա ստացած ընդունման անդորրագրերի պատճենների հիման վրա:

55· Յուրաքանչյուր առանձին անհատական տնտեսության պարտավորագրերի կատարման հաշվառումը և հացահատիկի հանձնման հսկողությունը կատարվում է գյուղխորհուրդում հանձնողների անձնական հաշիվների համաձայն, վորոնց մեջ գրանցումները կատարվում են ընդունման անդորրագրերի այն պատճենների հիման վրա, վորոնք ստացվում են գյուղխորհուրդում Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի միջոցով մթերման կայաններից:

VII· ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

56· Հիմնվելով կոլտնտեսությունների համար սահմանված հացահատիկ հանձնելու պարտավորությունների կա-

տարման ամսական ստուգումների վրա, Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը գյուղխորհուրդների միջոցով կատարում է տուգանքի գանձումն այն կոլտնտեսություններից, որոնք սահմանված ժամկետին չեն կատարել նրանց համար սահմանված պարտավորությունները, տվյալ ժամկետին պարտավորությունների չկատարված մասի չուկայական արժեքի չափով, և բացի այդ, նույնպես գյուղխորհրդի միջոցով բռնագանձում է հացահատիկով անվիճելի կարգով մինչև ժամկետը լրանալը··· այդ կոլտնտեսություններից տարեկան ամբողջ պարտավորության չկատարած մասը:

57· Գանձված տուգանքները բաշխվում են 1933 թ· գոյություն ունեցող կարգով, այն է— տուգանքների դիմաց ստացված գումարների 40 % հատկացվում է ընդհանուր պետական բյուջեին, իսկ մնացած 60 % հատկացվում է տեղական, շրջանային և գյուղական բյուջեներին, այն պայմանով, որ գյուղական բյուջեին հանձնվի առնվազն 25%:

57· Ցուրաքանչյուր ամսի 10–ից վոչ ուշ գյուղխորհրդի նախագահը՝ անհատական տնտեսությունների վերաբերյալ նրա մոտ կատարվող հաշվառման հիման վրա, կազմում ու ներկայացնում է Մթերման Կոմիտեի շրջլիազորին այն անհատական տնտեսությունների ցուցակները, որոնք չեն կատարել հացահատիկ հանձնելու նախորդ ամսվա իրենց պարտավորությունները, նրանց պատասխանատվության կանչելու համար, համաձայն ՀՍԽՀ քր· Օրենսգրքի 87–րդ հոդվածի:

59· Այն անհատական տնտեսությունների նկատմամբ, որոնք նախորդ ամսվա ընթացքում չեն կատարել պետությանը հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները, ԺԿՄ–ի Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը վարվում է ՀՍԽՀ Քր· Օրենսգրքի 87–րդ հոդ· համապատասխան՝

ա) իրենց պարտավորությունները չկատարած անհատական տնտեսություններին առաջին անգամ, յեթե այդ թերակատարումը չարամիտ կամ խմբական բնույթ չի կրում, գյուղխորհուրդների միջոցով յենթարկում է տուգանքի չուկայի գներով պարտավորությունների թերակատարման մասի հրնդապատիկ չափով և այդ տնտեսություններից ժամկետից առաջ անվիճելի կարգով բռնագանձվում է հացահատիկով վողջ տարեկան պարտավորության չկատարած մասը·

բ) այն դեպքում, յերբ անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու ժամանակ պարտավորությունների թերակատարումը չարամիտ կամ խմբական բնույթ է կրում, ժողկոմխորհի շրջլիազորը պարտավոր է դատական մարմինների միջոցով պատասխանատվության կանչել այդ տնտեսությունները՝ ՀՍԽՀ քրեական կոդեկսի 87–րդ հոդվածի համաձայն:

60· Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների վրա դրված տուգանքների հաշվառում է կատարում ու անձամբ պարտավոր է բոլոր միջոցներով ապահովել ինչպես նրանց վրա դրած տուգանքների գանձումը, այնպես ել պետությանը հացահատիկ հանձնելու վողջ տարեկան պարտավորության թերակատարած մասի ժամկետից առաջ լրիվ բռնագանձումը:

VIII· ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՆՁՆՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

61· Կոլտնտեսությունները կարող են՝ պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման իրենց համար սահմանված չափը բողոքարկել Մթերման Կոմիտեի շրջանային լիազորի միջոցով Մթերման Կոմիտեի հանրապետական լիազորին: Շրջանային լիազորը պարտավոր է կոլտնտեսություններից ստացված բողոքները 2 որվա ժամանակամիջոցում իր յեզրակացության հետ միասին ներկայացնել Հանրապետական Լիազորին:

Վերջինս պարտավոր է բողոքն ստանալու որից 10 որվա ընթացքում քննության առնելու այդպիսին և իր վճռի մասին հայտնել բողոք տվող կոլտնտեսությանը, նույնպես և Մթերման Կոմիտեի շրջանային լիազորին և այն շրջանի շրջգործկոմի նախագահին, որի մեջ գտնվում է բողոք ներկայացնող կոլտնտեսությունը:

Մթերման Կոմիտեի հանրապետական լիազորի վորոշումը, կոլտնտեսության բողոքի վերաբերյալ, վերջնական է և հետագա բողոքարկման յենթակա չէ:

62· Անհատական տնտեսությունները՝ հացահատիկի պարտադիր հանձնման նրանց համար սահմանված չափերը կարող են բողոքարկել շրջգործկոմի նախագահությանը, վո-

ը քննության է առնում բողոքը 7 որվա ժամանակամիջոցում: Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի մասնակցությամբ:

Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի հետ շրջգործկոմի նախագահության կողմից համաձայնեցրած վորոշումը վերջնական է, հետագա բողոքարկման յենթակա չէ և հայտնվում է բողոք տվողին ու համապատասխան դյուղխորհրդին:

Շրջգործկոմի նախագահության և Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի միջև տարաձայնություն յեղած դեպքում, հարցը ներկայացվում է Մթերման Կոմիտեյի Հանրապետական Լիազորի լուծմանը:

Վերջինիս կողմից բողոքի վերաբերյալ կայացրած վճիռը վերջնական է և հայտնվում է շրջգործկոմին ու Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորին, վորն իր հերթին հայտնում է այդ վճիռը բողոք տվողին ու համապատասխան դյուղխորհրդներին:

63. Բողոքի ներկայացնելու ժամկետը սահմանվում է՝ ինչպես անհատական տնտեսությունների, այնպես եվ կոլտնտեսությունների համար—15 որ, պետությանը պարտադիր հացահատիկի հանձնման պարտավորագրերը նրանց հանձնելու որից հաշված: Այդ ժամկետին հանձնելուց հետո, վոչ շրջգործկոմը և վոչ եվ Մթերման Կոմիտեյի Հանրապետական Լիազորները վոչ մի բողոք չեն ընդունում քննության համար:

IX.

Այս հրահանգը տարածվում է բացառապես կոլտնտեսությունների և մենատնտեսների ցանքսերի վրա: Հացահատիկի հանձնումը զանազան կազմակերպությունների ցանքսերից (ՈՐՍ-ներ, Անդրկոոպերացիայի, կոոպտնտեսությունների և այլն) կատարվում է հատուկ կարգով, վոր սահմանվում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեյի կողմից: Հատուկ կարգով կատարվում է նաև հացահատիկի հանձնումը կոլտնտեսականների մերձառային ցանքսերից:

Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեյի Հայաստանի

Լիազոր՝ Ա. ԴԱՍՏԱԿՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0209294